№ 157 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24 1900 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24 № 157

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հնարաւորութիւն չունենալով առանձնապէս շնորհակալութիւնս վկայելու յարգելի ազգականներիս եւ ծանօթներիս, որոնք նամակով ու հեռագրով հաճեցին ցաւակցել ինձ թանգագին եւ անփոխարինելի մօրս մահվան առիթով՝ սրանով յայտնում եմ ամենախորին շնորհակալութիւնս։

Մ. Մուրատեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աջող փորձ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատճառն ուրիշ է. Այսպէս էր խօսում Զրադաշը.

ԱՋՈՂ ՓՈՐՁ

Պրոֆեսօր Դոկուչաեվ երեք ամառ շարունակ ուսումնասիրում է Անդրկովկասի զանազան մասերում գտնվող հողերը։ Այդ ուսումնասիրութիւնը ունեցաւ արդիւնաբար հետեւանք։ Անդրկովկասի հողային կազմութիւնը լուսաբանվեց ընդհանուր սկզբունքներով։ Պրոֆէսօրին աջողվեց մեր երկրի հողային կազմութիւնը վերածել որոշ համակարգութեան և մի այնպիսի սիստեմի, որ շատ դիւրացնում է նրա մանրամասն հետազօտութիւնը ապագայում։

Դոկուչաեվի հետազօտութիւնների շնորհիւ այժմ պարզվեց, որ մեր երկրի զանազան մասերում, ուր գործում են նոյնատեսակ կլիմայական պայմաններ, կազմվել են դարերի ընթացքում միմեանց նման հողային շերտեր։ Եւ այդպիսով մի Շիրակ, մի Զաւախք ստացել է նոյնպիսի հողային կազմութիւն, ինչպիսին ունեն Զանգեզուրի սարահարթերը, կամ նոյն իսկ Ռուսաստանի ներքին նահանգների սեւահողը։ Եթէ այդ ուղիղ է, և հեռաւոր տեղերը ունեն միմեանց հետ որոշ կապ, այն ժամանակ կարելի է մի տեղի վերաբերութեամբ մշակված կատարելագործութիւնը հեշտութեամբ և աջողութեամբ գործադրել և միւս համանման տեղերում։

Մեր երկրի մէջ լուրջ գիտական հետազօտութիւնները այնքան սակաւաթիւ են, մանաւանդ այնպիսի հետազօտութիւններ, որոնք լոյս են սփռում երեւոյթների մի ընդարձակ շարքի վրա, որ մենք մի առանձին հաճութիւն ենք զգում արձանագրելու մեր երկրի ուսումնասիրութեան վերաբերեալ ներկայ համակրական քայլերից մէկը։ Պրոֆեսօր Դոկուչաեվ դիտաւորութիւն ունի առաջիկայ սեպտեմբեր ամսի սկզբին կարդալ Թիֆլիսում չորս դասախօսութիւն և պարզել թէ այն ընդհանուր օրէնքները, որոնք գործում են հողի կազմութեան միջոցին, և թէ այն հետեւանքները, որ ստացել է նա Անդրկովկասի հողերի ուսումնասիրութիւնից։

Ներկայ փորձը ցոյց տուեց, որ Անդրկովկասը գիտական հետազօտութեան համար ներկայացնում է ոչ միայն ընդարձակ, այլ և արդիւնաւէտ ասպարէզ։ Երկրի լեռնային դիրքը, առաջ բերելով անվերջ բազմազանութիւն, դարձրել է նրան մի բնական լաբօրատորիա, որտեղ կարելի է ուսումնասիրել ոչ միայն հողային և կլիմայական, այլ և կուլտուրական կարևոր խնդիրներ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Զինական դէպքերը առիթ են տուել «Сѣв. Курьеръ» լրագրին խօսելու Պետերբուրգի համալսարանի արեւելեան լեզուների բաժանմունքի մասին։ Այդ բաժանմունքը, ինչպէս ճիշդ նկատում է լրագիրը, չէ համապատասխանում իր կոչման։ Նա միայն կիսատ-պռատ, այն էլ միայն զուտ տեսական, գիտելիքներ է տալիս ուսանողներին եւ դրա շնորհիւ է, որ այնքան քիչ են տարածված ռուս հասարակութեան մէջ նոյն իսկ տարրական տեղեկութիւններ արեւելեան ազգերի մասին, այնքան քիչ, որ նոյն իսկ լրագիրներում գրում են «բռունցքականների ցեղի (?!) սովորութիւնների մասին»։

«Եթէ փորձենք հաչել, թէ ինչ է տալիս արեւելեան բաժանմունքը իր ուսանողներին, կը տեսնենք հետեւեալը—թոյլ ծանօթութիւն ռուսների համար կարեւոր օսմանեան լեզուին, մի քիչ հասկացողութիւն ջաղատայական եւ կիրգիզեան, յամենայն դէպս, ոչ անօգուտ լեզուների մասին, երկու անօգուտ լեզուներ՝ հին արաբական եւ կազանի թաթարական (Կազանի նահանգի բոլոր քաղաքներում թաթարները գիտեն ռուսերէն խօսել) եւ, իբր լուսաւոր բիծ, մի քանի արժէքաւոր գիտելիքներ պարսկական լեզուից։ Այնպիսի իսկապէս օգտակար լեզուների մասին, ինչպէս են նոր արաբականը եւ Ատրպատականի թաթարականը, արեւելեան բաժանմունքում ոչ մի խօսք չեն ասում... Կարելի կը լինի ուրեմն զարմանալ, եթէ «Մօտաւոր արեւելքում դէպքեր» պատահելիս՝ մենք սկսենք տեղեկութիւններ քաղել Թիւրքիայի եւ Պարսկաստանի մասին ֆրանսիական աղբիւրներից կամ հնարել սուֆիաների «ցեղ» կամ դարվիշների «ազգ»։

Նոյն հարցին նուիրված հետեւեալ յօդուածում ռուս լրագիրը այն միտքն է արծարծում, թէ արեւելեան լեզուների բաժանմունքը պէտք է կրի զուտ գործնական բնաւորութիւն, հրաժարվելով ուսանողներին տեսական գիտութիւն տալուց,—մի միտք, որ վերին աստիճանի անհիմն է, որովհետեւ ինչ գործնական շահեր էլ ունենայ պետութիւնը, համալսարանը պէտք է լինի գիտութեան տաճար իր բոլոր բաժանմունքներով, իսկ զուտ գործնական նպատակների համար պէտք է հիմնել ուրիշ դըպրոցներ։ Այդ ամենեւին չէ նշանակում, ի հարկէ, թէ համալսարանը պէտք է ձգտի դառնալ «փղոսկրէ աշտարակ» ինչ որ անհասանելի բարձրութեամբ, եւ այդ տեսակէտից շատ իրաւացի է լրագրի պահանջը, որ արեւելեան բաժանմունքում դասախօսեն Արեւելքի պետական կազմակերպութեան եւ մուսուլմանական իրաւագիտութեան մասին, ինչպէս իրաւացի է եւ այն նկատողութիւնը, թէ արեւելեան բաժանմունքը այժմ շատ քիչ բան է անում եւ բուն գիտական նպատակով։

«Որոնք են այդ բաժանմունքի գիտական նպատակները, հարցնում է լրագիրը։ Հաւատացէք, որ նա չունի ոչ մի այդպիսի նպատակ։ Համեմատական լեզուաբանութեան ուսումնասիրութեան մասին խօսք անգամ չէ կարող լինել.....«Արեւելեան իմաստութեան» հետ բաժանմունքը չէ կարող ծանօթացնել... որովհետեւ այնտեղ չեն կարդում փիլիսոփայական բնագիրներ։ Իսլամի ուսումնասիրութեան մասին առհասարակ նոյնպէս խօսք չէ կարող լինել, որովհետեւ, որքան էլ այդ տարօրինակ լինի, այդ բաժանմունքում չեն դասախօսում ոչ Իսլամի պատմութիւնը, ոչ մարգարէի կրօնի բառարանի հիմքերը, եւ աւելի հարցաւոր ուսանողներին թոյլ է տրվում ծանօթանալ այդ առարկաների հետ Պավլենկովի կենսագրական գրադարանից, Բրօկհաուզի եւ Էֆրոնի հանրագիտական բառարանից եւ այլն»։

Յօդուածը վերջանում է մի համակրելի առաջարկութեամբ.

«Պէտք է թոյլ տալ մտնել արեւելեան բաժանմունքը, իբրեւ ազատ լսողներ, առեւտրական աշխարհին պատկանող երիտասարդներին։ Բերլինի արեւելեան լեզուների դըպրոցի փորձը ցոյց տուեց, որ առեւտրական ծառայողներին իբր ունկնդիրներ ընդունելը չէ խանգարում ամենեւին ուսանողների զբաղմունքներին»։

Եթէ արեւելեան լեզուների բաժանմունքի ուսանողները «Сѣв. Курьеръ»-ի ասելով, գրեթէ ոչինչ չեն սովորում, որովհետեւ բաժանմունքը նրանց բան չէ տալիս, արտասահմանի համալսարանի ռուսաստանցի ուսանողները, «Новое Обозрѣніе» լրագրի թղթակցի ասելով, ոչինչ չեն սովորում, որովհետեւ սովոր չեն ինքնուրոյն, ազատ զբաղմունքների, մինչդեռ այդպիսի զբաղմունքների սովոր ուսանողների համար են այնտեղի համալսարանները։

«Գերմանական համալսարանները, օրինակ, վաղուց ստացել են լաւագոյն եւ մինչ այժմ օրինակելի բարձրագոյն դպրոցների հռչակ... Բայց ես չեմ չօշափում այն հարցը, թէ որտեղ կարելի է աւելի լաւ սովորել, այլ հաւաստում եմ փաստը, խօսում եմ նրա մասին, թէ որտեղ են աւելի լաւ սովորում մերոնք (Ռուսաստանի թէ արտասահմանի համալսարաններում)... Որքան էլ ցաւալի է այդ, բայց ես պէտք է վկայեմ, կենտրօնացել է Բագուում, թողնելով երկրում մի ահագին ազգաբնակութիւն առանց կրթված տարրի։

Պ. Դաւթեան հրաւիրում է մեր ինտէլիգէնտներին Բագու, որպէս զի նրանք կատարելագործութիւն մտցնեն արդիւնաբերական գործառնութիւնների մէջ, որպէս զի նրանք նպաստեն երկրի արդիւնաբերական զարգացմանը։ Ինչպէս յայտնի է, մեր գաւառական ուսուցիչները գնալով Բագու, կամ հաչապահ ու գործակատար են դառնում, կամ հնչին մակլէրութիւն են անում եւ առհասարակ այդ տեսակ մանր-մունր պաշտօններ են ձեռք բերում։ Հարց է ծագում—արդեօք մեր ուսուցիչները, որոնց մասնագիտութիւնը մանկավարժութիւնն է, ինչ կատարելագործութիւն կարող են մտցնել հաչապահութեան, գործակատարութեան կամ մակլէրութեան մէջ։ Կամ առհասարակ ինչպէս կարող են նպաստել արդիւնաբերութեան զարգացմանը, քանի որ նրանց մասնագիտութիւնը ոչ մի կապ չունի արդիւնաբերութեան հետ։ Ինչ վերաբերում է գաղափարական գործունէութեան, մենք արդէն ասել ենք, որ Բագուում բանուորական դասակարգ չը կայ, եւ այդ պատճառով այդպիսի գործունէութեան համար Բագուն աւելի լայն ասպարէզ չէ կարող ներկայացնել, քան մեր միւս կենտրօնները։ Երբ որ այդ դասակարգը առաջ կը գայ եւ մեր մէջ, այն ժամանակ էլ մենք կարող ենք առաւելութիւն տալ այն կենտրօններին, որտեղ կը լինի բանուորը։

Եւ վերջապէս ինչ կարիք կայ աչքերը փակել իրականութեան առաջ։ Ի՞նչ է ասում մեզ այդ իրականութիւնը։ Արդեօք Բագու եկող մեր գաւառական ինտէլիգէնտները որ եւ է օգուտ տալիս իրանց շրջապատողներին, կատարելագործութիւն մտցնում են արդիւնաբերութեան մէջ։ Երկրորդ հարցին աւելորդ է նոյն իսկ պատասխանել, իսկ առաջին հարցին պատասխանում է ինքը պ. Դաւթեան, որ խոստովանում է, թէ նրանք ոչ միայն նոր հոսանք չեն կարողանում առաջացնել իրանց շրջապատողների մէջ, այլ, ընդհակառակը, իրանք են ենթարկվում տիրող կեղտոտ հոսանքին։ Եւ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել։ Բագուում գլուխը պահելու համար հարկաւոր է մրցութեան մէջ մտնել ուրիշների հետ։ Իսկ ովքեր են Բագու եկած գաւառական ինտէլիգէնտների մրցակիցները. զանազան մութ անձնաւորութիւններ։ Այնտեղ ազնիւ մրցութեան համար ոչ մի ասպարէզ չը կայ։ Այդ մրցութեան մէջ ոչ մի օգուտ չէ կարող բերել ուսուցչին նրա սովորած մանկավարժութիւնը։ Յաղթութիւնը տանում է նա, ով աւելի ճարպիկ է, վատ տեսակի ճարպիկ, ով աւելի շատ է գործ դնում քսու եւ անազնիւ միջոցներ։ Ով այս միջոցները գործ չէ դընում, նա եւ մնում է քաղցած։ Կրկնում ենք, այդ ընդունում է եւ ինքը պ. Դաւթեան։

Իսկ եթէ այդ ճիշդ է, հիմք չը կայ ոգեւորվելու Բագուի արդիւնաբերական կեանքով։ Որքան էլ զարգացած լինի այժմ արդիւնաբերութիւնը այնտեղ, որքան էլ նա զարգանայ ապագայում, դարձեալ հիմք չը կայ գերագասելու Բագուն, անտես առնելով մի ահագին ազգաբնակութիւն, որը ապրում է Բագուից դուրս եւ որի հետ համեմատած՝ Բագուն շատ փոքր բան է ներկայացնում։

Ա. Ամ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՃԱՌԸ ՈՒՐԻՇ Է

Կամենալով արդարացնել ինտէլիգէնցիայի Բագու դիմելը, պ. Դաւթեան ընկնում է հակասութիւնների մէջ։ Նա խոստովանում է, որ «Յիրաւի Բագուի հանգամանքները կործանիչ են բարոյական տեսակէտից»։ Այնուհետեւ նա բացատրում է, թէ ինչպէս այդ կործանիչ հանգամանքները բարոյական այլանդակութեան են ենթարկում ոչ միայն մեր ոչ իսկական ինտէլիգէնտներին, այլ եւ «իսկական ինտէլիգէնտներին»։ «Դրանք (այսինքն իսկական ինտէլիգէնտները) պաշտօն ստանալով, տանում են ստանձնած գործը. բայց ինչ գործ, մի ակամայ գործ, որ զուգընթանում է հազար ու մի վիրաւորանքների, զրկանքների եւ հարստահարութիւնների հետ։ Այդ դրութիւնը տանջում է նրան. նա սովոր չէ. նա զայրանում, վշտանում, վրդովվում է, բայց վերջ ի վերջոյ, ժամանակի ընթացքում, հաշտվում է իր անմխիթար վիճակի հետ։ Այլ եւս ուրիշ ելք չէ մնում, չարունակում է պ. յօդուածագիրը,—կամ թողնել հեռանալ եւ կամ, թէկուզ ակամայ, հաշտվել դրութեան հետ։ Անկասկած շատ շատերը կը հեռանային, եթէ միայն հնարաւոր լինէր, բայց ուր է այդ հնարաւորութիւնը»։ Եւ որովհետեւ չը կայ հեռանալու այդ հնարաւորութիւնը, այդ պատճառով էլ «նա ընտելանում է»։ «Նա այլ եւս չէ տրտնջում, տեղի ունեցող տգեղ արարքները նրան այլ եւս չեն վրդովեցնում, նա կորցնում է բողոքելու ընդունակութիւնը եւ անտարբեր է դառնում»։ Բայց չը նայած, որ ընտելանում են (հասկանում էք՝ ինչ է նշանակում այդ ընտելանալ խօսքը), այնու ամենայնիւ «իսկական ինտէլիգէնտները» այդ ստոր վաստակով երբէք չեն հարստանում (պ. Դաւթեան նրանց վաստակածը ստոր վաստակ է անուանում)։ Կան 10—15 տարվայ ծառայողներ (խօսքը իսկական ինտէլիգէնտների մասին է), որոնք բացի պարտքերից, ուրիշ ոչինչ չունեն։

Այս բոլորը պ. յօդուածագիրը չափազանց գեղեցիկ եւ չափազանց ճիշդ է նկարագրել։ Եւ այս բոլորից ընթերցողը այն եզրակացութիւնն է անում, որ Բագուում իսկական ինտէլիգէնտները «կորցնելով մարդկային թանգագին արժանաւորութիւնները», դարձեալ չեն կարողանում ապահով կեանք վարել, դարձեալ զըրկանքներ են կրում։ Եթէ այդպէս է, ապա ինչու են նրանք մնում Բագուում—հարց է ծագում ընթերցողի գլխում։ Որովհետեւ հնար չը կայ հեռանալու, պատասխանում է յօդուածագիրը։ Եթէ հնարաւորութիւն լինէր, ասում է նա, ոչ ոք հօ իր ազատութիւնը չէր վաճառի։ Այս խօսքերից մի քանի տող յետոյ, պ. յօդուածագիրը արդէն բացարձակօրէն յայտնում է, թէ որքան շատ ինտէլիգէնտներ մասնակցեն Բագուի արդիւնաբերական գործում, այնքան լաւ։

Ի հարկէ, ամեն տեղ որքան շատ ինտէլիգէնտ աշխատաւորներ լինեն, այնքան լաւ։ Բայց մեզ ո՞վ կը տայ այնքան ինտէլիգէնտներ, որ մենք այդպէս «բոլ-բոլ» անենք։ Հէնց ցաւն էլ նրանումն է կայանում, որ մենք մի բուռն ինտէլիգէնցիա ունենք եւ այդ մի բուռն էլ պակաս է։ Նոյն հարցին նուիրված հետեւեալ յօդուածում ռուս լրագիրը այն միտքն է արծարծում, թէ արեւելեան լեզուների բաժանմունքը պէտք է կրի զուտ գործնական բնաւորութիւն, հրաժարվելով ուսանողներին տեսական գիտութիւն տալուց,—մի միտք, որ վերին աստիճանի անհիմն է, որովհետեւ ինչ գործնական շահեր էլ ունենայ պետութիւնը, համալսարանը պէտք է լինի գիտութեան տաճար իր բոլոր բաժանմունքներով, իսկ զուտ գործնական նպատակների համար պէտք է հիմնել ուրիշ դըպրոցներ։ Այդ ամենեւին չէ նշանակում, ի հարկէ, թէ համալսարանը պէտք է ձգտի դառնալ «փղոսկրէ աշտարակ» ինչ որ անհասանելի բարձրութեամբ, եւ այդ տեսակէտից շատ իրաւացի է լրագրի պահանջը, որ արեւելեան բաժանմունքում դասախօսեն Արեւելքի պետական կազմակերպութեան եւ մուսուլմանական իրաւագիտութեան մասին, ինչպէս իրաւացի է եւ այն նկատողութիւնը, թէ արեւելեան բաժանմունքը այժմ շատ քիչ բան է անում եւ բուն գիտական նպատակով։

«Որոնք են այդ բաժանմունքի գիտական նպատակները, հարցնում է լրագիրը։ Հաւատացէք, որ նա չունի ոչ մի այդպիսի նպատակ։ Համեմատական լեզուաբանութեան ուսումնասիրութեան մասին խօսք անգամ չէ կարող լինել.....«Արեւելեան իմաստութեան» հետ բաժանմունքը չէ կարող ծանօթացնել... որովհետեւ այնտեղ չեն կարդում փիլիսոփայական բնագիրներ։ Իսլամի ուսումնասիրութեան մասին առհասարակ նոյնպէս խօսք չէ կարող լինել, որովհետեւ, որքան էլ այդ տարօրինակ լինի, այդ բաժանմունքում չեն դասախօսում ոչ Իսլամի պատմութիւնը, ոչ մարգարէի կրօնի բառարանի հիմքերը, եւ աւելի հարցաւոր ուսանողներին թոյլ է տրվում ծանօթանալ այդ առարկաների հետ Պավլենկովի կենսագրական գրադարանից, Բրօկհաուզի եւ Էֆրոնի հանրագիտական բառարանից եւ այլն»։

Յօդուածը վերջանում է մի համակրելի առաջարկութեամբ.

«Պէտք է թոյլ տալ մտնել արեւելեան բաժանմունքը, իբրեւ ազատ լսողներ, առեւտրական աշխարհին պատկանող երիտասարդներին։ Բերլինի արեւելեան լեզուների դըպրոցի փորձը ցոյց տուեց, որ առեւտրական ծառայողներին իբր ունկնդիրներ ընդունելը չէ խանգարում ամենեւին ուսանողների զբաղմունքներին»։

Եթէ արեւելեան լեզուների բաժանմունքի ուսանողները «Сѣв. Курьеръ»-ի ասելով, գրեթէ ոչինչ չեն սովորում, որովհետեւ բաժանմունքը նրանց բան չէ տալիս, արտասահմանի համալսարանի ռուսաստանցի ուսանողները, «Новое Обозрѣніе» լրագրի թղթակցի ասելով, ոչինչ չեն սովորում, որովհետեւ սովոր չեն ինքնուրոյն, ազատ զբաղմունքների, մինչդեռ այդպիսի զբաղմունքների սովոր ուսանողների համար են այնտեղի համալսարանները։

«Գերմանական համալսարանները, օրինակ, վաղուց ստացել են լաւագոյն եւ մինչ այժմ օրինակելի բարձրագոյն դպրոցների հռչակ... Բայց ես չեմ չօշափում այն հարցը, թէ որտեղ կարելի է աւելի լաւ սովորել, այլ հաւաստում եմ փաստը, խօսում եմ նրա մասին, թէ որտեղ են աւելի լաւ սովորում մերոնք (Ռուսաստանի թէ արտասահմանի համալսարաններում)... Որքան էլ ցաւալի է այդ, բայց ես պէտք է վկայեմ,

որ այն ամբողջ ժամանակվայ ընթացքում, որ ես անցրել եմ զանազան համալսարանական քաղաքներում եւ յարաբերութիւններ եմ ունեցել Գերմանիայի, Ֆրանսիայի եւ Շվեյցարիայի բոլոր անկիւններում ցրված ուսանողների հետ, ես, քանի գնում, աւելի եւ աւելի եմ գալիս այն համոզմունքին, որ մեր, ռուս ուսանողները շատ քիչ բան են դուրս բերում այստեղի դպրոցներից։ Եթէ վիճակագրութեամբ զբաղվենք, ամենից առաջ մեր աչքին կը խփի այստեղ ամբողջ դասընթացք աւարտողների աննշան թիւը։ Բացի այդ, այդ երկու երեք հոգին էլ, որոնք վերջապէս կարողացել են իրանց doctor անուանել, չարաչարի դիպլոմը ստանալու համար մնացել են այստեղ 14, 12 եւ 10 տարիներ։ Ինչ վերաբերում է նրանց, որոնք 9, 8, 7 տարի քաշ են եկել այստեղ եւ գնացել, առանց մի բան անելու,—այդպիսիների թիւն էլ է կորել, հաստատ էլ։ Կան ի հարկէ եւ բացառութիւններ, բայց նրանք շատ սակաւաթիւ են։ Ինչիցն է առաջ գալիս այդ։ Ինձ թւում է, թէ մեր երիտասարդները ամենեին պատրաստված չեն արտասահմանեան համալսարաններ մտնելու համար։»

Ռուսաց գիմնազիաներում, ասում է թղթակիցը, աշակերտները գիտեն, որ, եթէ չը սովորեն, վատ թուանշան կը ստանան, երկրորդ տարին կը մնան դասարանում, կարտաքսվեն եւ այլն։ Գրեթէ նոյնն է շարունակվում եւ համալսարանում, ուր «зачетъ»-ներով ստուգում են ուսանողի պարապմունքները եւ ուր, մինչեւ վերջին ժամանակները, «պէդէլները» հըսկում էին, որ ուսանողները կանոնաւոր յաճախէին դասախօսութիւններին։

«Այստեղ (արտասահմանում) ոչ ոք հոգ չէ տանում այդ բանի մասին, որովհետեւ ամենքը համոզված են, որ դեռ միջնակարգ դպրոցում ուսուցիչը սովորեցրել է ձեզ աշխատել, ներշնչել է ձեզ աշխատանքի օգտի եւ ծուլութեան վնասի գիտակցութիւնը... Բոլորովին ուրիշ տեսակ են սովորել պարապել մեր ուսանողները... եւ նրանցից ոմանք 7—8 տարի արտասահմանում մնալուց յետոյ, առանց որ եւ է օգուտ քաղելու իրանց համար, հպարտ-հպարտ յայտնում են, թէ իրանք անցել են ամբողջ դասընթացքը, միայն թէ քննութիւն չեն տուել։ «Դիպլոմի համար։ Բայց չէ՞ որ դիպլոմը նշանակութիւն չունի մեզնում, ոչ մի իրաւունք չէ տալիս... Էլ ինչիս պէտքն է նա»։

Ինչ որ ասում է թղթակիցը ընդհանրապէս ռուսաստանցի ուսանողների մասին, բոլորովին ճիշդ է եւ հայ ուսանողների վերաբերմամբ։ Պէտք է աւելացնել միայն այն, որ մերոնք (թեմական դպրոցներ աւարտողները) աւելի եւս անպատրաստ են գնում արտասահման։ Շուշու եւ Երեւանի դպրոցների մասին չարժէ նոյն իսկ խօսել, բայց տարին 70,000 ր. եկամուտ ունեցող Ներսիսեան դպրոցն էլ այնպիսի չրջանաւարտներ է տալիս, որոնք մեծ մասամբ չեն սովորել աշխատել ոչ վախից, ոչ էլ կամաւոր կերպով, իսկ ինչ որ կիսատ պռատ սովորել են ամեն մի ուսումնական տարի, կանոնաւոր կերպով մոռացել են ամառվայ ընթացքում, յիշեցնելով սուրբ Յակոբին, որ, ինչպէս ասում է աւանդութիւնը, ցանկանալով տեսնել տապանը՝ ամեն ցերեկ բարձրանում էր Մասիսի լանջով, բայց երբ քնում էր վեր կենում, տեսնում էր, որ էլի առաջվայ տեղումն է,—ս. Յակոբին Աստծու հրեշտակը տուեց վերջապէս տապանի մի կտորը, մեր աշակերտներին էլ հրեշտակասիրտ քննողները տալիս են վկայականի մի կտոր։—Այդպիսի անընդունակութեամբ դէպի աշխատանքը եւ այդպիսի ողորմելի պաչարով գնալով արտասահման, մեր պատանիները, ի հարկէ, մեծ մասամբ զուր են կորցնում իրանց ժամանակը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մենք արդէն հաղորդել էինք, որ երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրի կովկասեան լիազօր պ. Մեդվեդեւի կարգադրութեամբ՝ ագրոնոմ Աւետիք Սահակեանց ուղարկված էր Ախալքալաքի գաւառը՝ հետազօտելու համար այն գիւղերի ցանքսերը, որոնք վնասվել են հօտենտօտեան մլուկից եւ բզէզից։ Պ. Սահակեանց մի ամսի չափ մնալով Ախալքալաքի գաւառում՝ մանրամասնաբար հետազօտել է բոլոր վնասված գիւղերը, որոնց թիւը 45-ի է հասնում։ Այս թւից 24 գիւղում ցանքսերը ոչնչացել են բոլորովին, այնպէս որ գիւղացիները զրկվել են ամբողջ հունձից, իսկ մնացած 21 գիւղերը վնասվել են մասամբ միայն, մի տեղում աւելի եւ միւս տեղում պակաս։ Վնասված գիւղերը, որոնք բոլորը միասին բաղկացած են 1884 ծուխից՝ 17,612 բնակիչներով, այժմ ամենացաւալի դրութեան մէջ են գտնվում։ 17,612 հոգի, բառի բուն նշանակութեամբ, մնացել են քաղցած, իսկ կենդանիներն—առանց պաչարեղէնի։ Հետեւեալ տարվայ հունձը այդ վնասակար միջատներից ազատվելու համար՝ պ. Սահակեանց առաջարկել է գիւղացիներին, ի միջի այլ միջոցների, այրել խոզանը (ծղնօտի մնացորդները արտերում) եւ գարնանացանի փոխարէն, որ ամենից աւելի ենթակայ է վնասակար միջատների ազդեցութեան, անցնել աշնանացանի։ Կորցնելով այս տարվայ ամբողջ հունձը՝ գիւղացիները մնացել են առանց սերմացուի։ Թէ գարնանացանի եւ թէ աշնանացանի համար անհրաժեշտ է բաժանել գիւղացիներին 142,374 պուդ ցորեն, գարի եւ կորեկ, իսկ այս տարվայ ընթացքում, մինչեւ նոր հունձի դուրս գալը, նրանց կերակրելու համար՝ անհրաժեշտ է ժամանակաւորապէս ամենաքիչը 180,000 պուդ ցորեն, կորեկ եւ գարի։ Պ. Սահակեանի հաշուելով՝ գիւղացիների ընդհանուր վնասը հասնում է մօտ 400,000 ռուբլու։

—

Ներկայումս Թիֆլիսումն է գտնվում պրոֆէսօր Դօկուչաեւ, որ վերադարձել է Լօռու գաւառում ուռուցմասիրութիւններ կատարելուց յետոյ։ Դօկուչաեւ կարճ ժամանակով կուղեւորվի Քութայիսի նահանգը՝ լրացնելու իր մի քանի դիտողութիւնները։ Այնտեղից նա կը վերադառնայ Թիֆլիս եւ սեպտեմբերի 3-ին, 5-ին, 7-ին եւ 9-ին կը կարդայ դասախօսութիւններ կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում։

—

ԳԵՕՐԻՍԻՑ մեզ գրում են, որ օգոստոսի 13-ին Տաթեւի վանքում հոգեհանգիստ է կատարվել Գրիգոր Զանչեանի յիշատակին։

—

Գօրու գաւառի ԴԻՐԲԻ գիւղից մեզ գրում են. «Օգոստոսի 13-ին, ս. Աստուածածնի տօնի օրը, մեր գիւղի 80 տուն ծխականները չարժանացան պատարագ լսելու, չնորհիւ այն հանգամանքի, որ մեր ծխական քահանայ Սիմէօն Սարգսեան, մեզ անյայտ պատճառով, թողնելով իր ծուխը, գնացել էր Տինխսխիդի գիւղը պատարագ մատուցանելու, մինչդեռ այդ գիւղի բնակիչները պատկանում են Գօրիի ս. Ստեփանոս եկեղեցու քահանայ Տէր-Մինասեանցի ծխին։ Այդ վերջին քահանան էլ պատարագ էր մատուցանում նոյն օրը Գօրիի ս. Ստեփանոս եկեղեցում, ուր մենակ է ինքը։ Ցանկալի է, որ Տինխսխիդի գիւղը դարձնէին այնպիսի եկեղեցու ծուխ, որ ունի մի քանի քահանայ։ Այն ժամանակ տեղի չէին ունենալ վերոյիշեալի նման դէպքեր»։

—

ԱՍԽԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 22-ին, Ասխաբադի հասարակական ժողովարանի ամառային նոր թատրոնում, դերասան Անդրանիկը, մասնակցութեամբ տեղիս սիրողների, տուեց մի ներկայացում եւս։ Խաղացին «Սամէլ» պատմական պիէսան։ Ներկայացումը անցաւ շատ աջող. ինչպէս երեւում է, այս անգամ թէ պ. դերասանը եւ թէ սիրողները բարեխղճութեամբ էին վերաբերվել դէպի գործը»։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի վերջերում տեղացող յորդառատ անձրեւները զգալի վնասներ պատճառեցին խաղողի այգիներին եւ կալերին։ Շատ գիւղերում ցորենի եւ յարդի ամբողջ չեղջեր ենթարկվել են հեղեղի։ Բայց եւ այնպէս բերքը Նախիջեւանի գաւառում այնքան չատ է, որ ամեն օր քաղաքային հրապարակի վրա ժողովված առնողծախողների խուռն բազմութիւնը եւ մրգեղէնի ու հացաբոյսերի առատութիւնը ուշադրութիւն են գործում։ Հացի գինը կիսով չափ պակասել է.—ցորենի խալվարը (25 պուդ) 45 ռուբլուց իջել է 20—25 ռուբլու։ Ժողովրդի նիւթական դրութիւնը ի նկատ առած, այդ գինը էլի թանգ է. ցանկալի է, որ քաղաքային դուման քիչ էլ պակասեցնէ հացի սակագինը։ Միւս ընդեղէնները եւ կենսական պիտոյքները վաճառվում են չափաւոր գներով։ Շատ տգաքաներ կերակրվում են մրգեղէնով, մանաւանդ սեխով եւ ձմերուկով։ Դրա հետեւանքն են լինում շատ հիւանդութիւններ, որոնք սաստիկ տարածված են քաղաքում»։

—

Շուշու գաւառի ԹԱՂԼԱՐ գիւղից մեզ գրում են։ «Մեզանում սաստիկ տարածված է կարմրուկ հիւանդութիւնը։ Բժշկական օգնութեան կատարեալ բացակայութիւն է։ Թէեւ կայ գաւառական բժիշկ, բայց միայն անունով։ Գոնէ Թաղլարում, որքան գիտենք, ամբողջ 3—4 տարի է, ոչ մի գաւառական բժիշկ ոտք չէ դրել. այդ պատճառով էլ գիւղացիները ստիպված են ամեն մէկ հիւանդութիւն պատահելիս դիմել զանազան «դալլաքների» կամ գիւղական «ջառահների»։ Ժամանակ է, որ Թաղլարցիները, որոնք մօտ 500 ծուխ են կազմում, մտածեն սեփական բժիշկ ունենալու մասին»։

—

ԱԲԱՍԹՈՒՄԱՆԻՑ մեզ գրում են. «Շնորհիւ ռուս, մասամբ եւ վրացի երիտասարդութեան ջանքերին, ներկայ սեզոնը Աբասթումանում, առանց էսթետիկական զուարճութիւնների չանցաւ։ Մի խումբ սիրողներ, բոտանդայի փոքրիկ բեմում, տուին հինգ ներկայացումներ բարեգործական նպատակով»։

—

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ պղնձահանքերից մեզ գրում են. «Հաղորդել էինք, որ անձրեւները ահագին վնասներ էին տուել այս կողմերի գիւղացիներին, անհարին դարձնելով կալ թակելը։ Յետոյ մի ժամանակ լաւ եղանակներ սկսեցին, բայց օգոստոսի 5-ից սկսվել է կրկին անձրեւային եղանակը։ Լսում ենք հաստատ աղբիւրից, որ Մեղրիի Գիւնէյի մհալում խիստ անձրեւներից առաջացած հեղեղները Մեղրիի արտերին մեծ վնասներ են պատճառել։ Օիչի գիւղում խեղդված են գտել մի կնոջ դիակ»։

—

Քութայիսի նահանգի ԼԱՆՉԽՈՒԹԻ գիւղից մեզ գրում են. «Լանչխութից մի քանի վերստ հեռաւորութեան վրա գտնվող Նիկօֆսի կայարանում, օգոստոսի 20-ին, իշխան Ալէքսանդր Մաչուտաձէի հարսանիքի ժամանակ, երբ պսակից յետոյ հարսն ու փեսան մտնում են տանը, հարսանքաւորները եւ տանը մնացածները սկսում են երկու կողմից ատրճանակներ արձակել։ Հանդիսականներից Իսինաիշվիլի անունով մէկի ատրճանակը խլատում է, չէ բացվում։ Երբ սկսում է քրքրել, յանկարծ ատրճանակը բացվում է եւ գնդակը դիպչում է նորապսակի եղբօր, Դիմիտրի Մաչուտաձէի, աղջկայ ճակատին, ու ոսկրը կոտրելով անցնում է։ Իսկոյն Լանչխութի բժշկին հրաւիրում են, եւ նրա օգնութեամբ վերքի արիւնը կտրվում է։ Ամբողջ ժամանակ աղջիկը ուշաթափ է լինում,

---

...ես կամուրջի ցանկապատ եմ դահավէժ հեղեղատի վրա,—թող բռնի ինձնից, ով ընդունակ է բռնել։ Բայց ես չեմ ծառայի իբրեւ անթացուպ (костыль)»։

Կարդալու եւ գրելու մասին

—

«Գրված բոլոր բաներից ես սիրում եմ միայն այն, որ գրում է մարդ իր սեփական արիւնով։ Գրիր քո արիւնով, եւ դու կիմանաս, որ ոգի է արիւնը։

Բայց հեշտ չէ հասկանալ ուրիշի արիւնը,—ես ատում եմ նրանց, որոնք կարդում են պարապութիւնից դրդված։

...Այն, որ ամեն մարդ յանդգնում է կարդալ, փչացնում է ոչ միայն գրելը, այլ եւ միտքը։

Երբեմն ոգին աստուածութիւն էր, յետոյ մարդ դարձաւ, իսկ այժմ դառնում է բացի այդ եւ մի մատն ամբոխի։

Ով որ գրում է արիւնով եւ առակներով, ուզում է, որ ոչ թէ կարդան իր գրածները, այլ անգիր անեն։

Սարերում ամենակարճ ճանապարհը՝ մի գագաթից միւսն է. բայց դրա համար պէտք է երկար ոտներ ունենալ։ Առակները պէտք է գագաթներ լինեն, եւ նրանք, որոնց ասվում են այդ առակները, պէտք հսկաներ լինեն եւ բարձր աճեն։

Մաքուր լեռնային օդ, մօտակայ վտանգ, ուրախ զայրոյթով լի ոգի,—այդ բոլորը շատ լաւ են բռնում իրար։

Ես ուզում եմ լեռնային ոգիներ ունենալ շուրջս, որովհետեւ հզօր եմ ես։ Անվեհերութիւնը ցրվում է ուրուականները եւ ինքը ստեղծում իր համար լեռնային ոգիներ,—անվեհերութիւնը ուզում է ծիծաղել։

...Անվեհեր, անհոգ, հեգնող, զօրեղ—այդպէս է ուզում մեզ տեսնել իմաստութիւնը. նա կին է եւ սիրում է միշտ միմիայն զինուորին։

...Ես կը հաւատայի միայն այնպիսի աստուածութեան, որ պարել իմանար (կենսուրախ կրօնի աստուածութիւն լինէր)»...

Սարի ծառի մասին

—

(Զրադաշտը պատահում է սարի վրա ծառին կոթնած մի պատանու։ Զրադաշտը ասում է նրան).

«...Մարդուս հետ նոյնն է պատահում, ինչ որ ծառի հետ։

Որքան աւելի է ձգտում նա դէպի վեր, դէպի լոյսը, այնքան սաստիկ են ձգտում նրա արմատները դէպի հողը, ներքեւ, դէպի խաւարը, խորը,—դէպի չարը։

...Դու դեռ ազատ չես, դու ազատութիւն ես փնտռում։ Դէպի ազատ բարձունքն ես ձգտում դու, աստղերի է ծարաւ քո հոգին։ Բայց քո վատ հակումներն էլ են ազատութեան ծարաւ զգում։

Քո վայրագ դաժանները (կրքերդ) ձգտում են ազատվել. նրանք ուրախութիւնից հաչում են իրանց ստորերկրեայ զնդանում, մինչդեռ ոգիդ ձգտում է կործանել բոլոր բանտերը։

Ըստ իս, դու դեռ կալանաւոր ես, որ ազատութիւն է երազում,—ախ, իմաստուն հոգի ունեն այդպիսի կալանաւորները։ Բայց մի եւ նոյն ժամանակ նա (նրանց հոգին) եւ նենգաւոր է եւ վատ։

Դեռ պէտք է մաքրվի՝ հոգեպէս ազատվածը։ Դեռ շատ խաւար եւ փտութիւն կայ նրա մէջ, —դեռ պէտք է մաքրվի նրա աչքը։

...Դու դեռ ազնիւ ես զգում քեզ... Իմացիր, որ ազնիւը խանգարում է ամենքին։

Նոյն իսկ բարիներին (բարոյականներին, ըստ հին բարոյագիտութեան) խանգարում է ազնիւը (բարոյականը, ըստ Նիցշէի)...

Ազնիւը նոր բան է ուզում ստեղծել, նոր առաքինութիւն։ Հինն է ուզում բարին, որպէս զի հինը մնայ անվնաս։

Բայց նրանում չէ վտանգը ազնիւի համար, որ նա բարի կը դառնայ, այլ նրանում, որ նա ամբարտաւան կը լինի, եւ կործանարար կը լինի, եւ կծու հեգնող։

Ախ, ես ճանաչել եմ ազնիւների, որոնք կորցրել են իրանց վեհագոյն յոյսը (դերմարդի նկատմամբ)։ Եւ այն ժամանակից նրանք զրպարտութիւններ էին բարդում բոլոր վեհագոյն յոյսերի վրա։

Այն ժամանակից նրանք անաժամ կերպով ապրում էին կարճատեւ զուարճութիւնների մէջ, եւ հազիւ մի օրվայ էր բաւում նրանց նպատակը։

Եւ ահա նրանք փչրեցին իրանց ոգու թեւերը,—այնուհետեւ նա (նրանց ոգին) սողում է եւ ցեխոտում իրան՝ խղճահարութեամբ։

Երբեմն նրանք մտածում էին հերոս դառնալ, իսկ այժմ նրանք ցանկասէրներ են։ Թախիծը եւ անգոյն գոյութիւնը փոխարինել են նրանց համար հերոսին։

Բայց իմ սիրով եւ յոյսով պատուիրում եմ քեզ,—պահպանել հոգուդ մէջ հերոսին։

Սրբութեամբ պահպանիր քո վեհագոյն յոյսը»։

Այսպէս էր խօսում Զրադաշտը։

(Կը շարունակվի)

ՍՅՍՊԷՍ ԷՐ ԽՕՍՈՒՄ ԶՐԱԴԱՇՏԸ

Ուրախութեան եւ կրքերի մասին

—

«Մի ժամանակ քո մէջ կային կրքեր, եւ դու չար էիր անուանում այդ կրքերը։ Իսկ այժմ քո մէջ կան միայն քո առաքինութիւնները,—կրքերիցդ են առաջ եկել նրանք։

Դու դրեցիր քո բարձրագոյն նպատակը (գերմարդ առաջացնելը) այդ կրքերի մէջ, եւ ահա նրանք դարձան քո առաքինութիւնը եւ ուրախութիւնը։

Եւ եթէ դու լինէիր զայրացկոտների թւից, կամ ցանկասէրների թւից եւ կամ մոլեռանդների կամ ոխակալների թւից,

Այնուամենայնիւ, վերջ ի վերջոյ, քո բոլոր կրքերը կը դառնային առաքինութիւններ եւ քո բոլոր փորձիչները՝ հրեշտակներ։

...Զարիք է, եղբայր իմ, պատերազմը եւ կռիւը։ Սակայն այդ չարիքը անհրաժեշտ է. անհրաժեշտ են եւ նախանձը, եւ անվստահութիւնը, եւ զրպարտութիւնը քո առաքինութիւնների մէջ...

Տես, ինչպէս քո առաքինութիւններից իւրաքանչիւրը ծարաւ է աւելի բարձր բանի. նա պահանջում է քո ամբողջ ոգին, որպէս զի նա (ոգին) նրա աւետաբերը լինի, նա պահանջում է քո ամբողջ ոյժը ատելութեան, զայրոյթի եւ սիրոյ մէջ...

Գունատ չարագործի մասին

—

...«Շատ բան նրանից, որ դուք բարի էք անուանում, զզուանք է զարթեցնում իմ մէջ, եւ իրաւ եմ ասում, նոյն բանը չէ պատահում ձեր չարի հետ։

հերութիւնը ուզում է ծիծաղել։

...Անվեհեր, անհոգ, հեգնող, զօրեղ—այդպէս է ուզում մեզ տեսնել իմաստութիւնը. նա կին է եւ սիրում է միշտ միմիայն զինուորին։

...Ես կը հաւատայի միայն այնպիսի աստուածութեան, որ պարել իմանար (կենսուրախ կրօնի աստուածութիւն լինէր)»...

Սարի ծառի մասին

—

(Զրադաշտը պատահում է սարի վրա ծառին կոթնած մի պատանու։ Զրադաշտը ասում է նրան).

«...Մարդուս հետ նոյնն է պատահում, ինչ որ ծառի հետ։

Որքան աւելի է ձգտում նա դէպի վեր, դէպի լոյսը, այնքան սաստիկ են ձգտում նրա արմատները դէպի հողը, ներքեւ, դէպի խաւարը, խորը,—դէպի չարը։

...Դու դեռ ազատ չես, դու ազատութիւն ես փնտռում։ Դէպի ազատ բարձունքն ես ձգտում դու, աստղերի է ծարաւ քո հոգին։ Բայց քո վատ հակումներն էլ են ազատութեան ծարաւ զգում։

Քո վայրագ դաժանները (կրքերդ) ձգտում են ազատվել. նրանք ուրախութիւնից հաչում են իրանց ստորերկրեայ զնդանում, մինչդեռ ոգիդ ձգտում է կործանել բոլոր բանտերը։

Ըստ իս, դու դեռ կալանաւոր ես, որ ազատութիւն է երազում,—ախ, իմաստուն հոգի ունեն այդպիսի կալանաւորները։ Բայց մի եւ նոյն ժամանակ նա (նրանց հոգին) եւ նենգաւոր է եւ վատ։

Դեռ պէտք է մաքրվի՝ հոգեպէս ազատվածը։ Դեռ շատ խաւար եւ փտութիւն կայ նրա մէջ,

եւ այնպէս տանում են նրան Բաթում։ Այնտեղ քննելով գտել են, որ վերքը մահացու չէ, բայց երկիւղ կայ խելագարման։ Այդպիսի շատ դէպքեր են տեղի ունենում առ հասարակ վրայ հարանիքներում։ Էլի անընդհատ անձրեւներ են տեղում։ Այս քանի օրերս եղանակը զով է։ Փորահարինք հիւանդութիւնը էլի չարունակւում է. այժմ յաճախ մեծերն էլ բռնվում են այդ հիւանդութեամբ»։

—

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են. «Օգոստոսի 6-ին Բաքուի Նահանգի եւ Դաղստանի գաւառի ժողովրդական ուսումնարանների վերատեսուչ պ. Պլախօդնիկով եւ տեղային գաւառապետի օգնական պ. Ֆեօդորով, գնալով Շամախու գաւառի Սաղեան գիւղը եւ ժողով գումարելով այնտեղ, առաջարկեցին ուսումնարան բանալ։ Գիւղացիները միաձայն ընդունեցին այդ առաջարկութիւնը։ Բարխուդարեան եղբայրները առաջարկեցին անվարձ, երեք տարի ժամանակով, իրանց գեղեցիկ քարէ տունը ուսումնարանի համար եւ հէնց այդտեղ էլ կազմվեց հավախօսական, որի հիման վրա ուսումնարանը պիտի բացվի այս տարվայ սեպտեմբերի մէկից. գիւղացիները պարտաւորվում են տալ ամեն տարի ուսումնարանի պահանջները լրացնելու համար 720 ռուբլի, բացի ծառայից, վառելափայտից եւ լուսաւորութիւնից։ Մի եւ նոյն օրը պ.պ. Պլախօդնիկովը եւ Ֆեօդորովը Սաղեան գիւղից գնացին նոյն գաւառի Մադրասա գիւղը։ Գիւղացիները այդտեղ էլ ուրախութեամբ ընդունեցին նրանց առաջարկութիւնը եւ կազմեցին հավախօսական գիւղում բանալու երկդասեան ուսումնարան, պարտաւորվելով տալ ամեն տարի 1300 ր. բացի ծառայից, վառելափայտից եւ լուսաւորութիւնից։ Այդ երկդասեան ուսումնարանի համար գիւղը ունի պատրաստ մի չքեղ եւ ահագին քարէ տուն։ Ուսումնարանը պիտի բացվի սեպտեմբերի մէկից։ Այդ երկու գիւղի խաղողի այգիները այս տարի սաստիկ վնասվել են կարկուտից։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Standard» լրագրում տպագրված է հետեւեալ տեղեկութիւնը Կ. Պոլսից. «Թիւրքական արտաքին գործերի մինիստրը այսօր այցելեց Կ. Պոլսի բոլոր դեսպանատները եւ խնդրեց դեսպաններին, որ նրանք առաջարկեն իրանց կառավարութիւններին յատուկ ներկայացուցիչներ ուղարկել Կ. Պոլիս՝ ներկայ լինելու համար այն հանդէսներին, որոնք տեղի են ունենալու Սուլթանի 25-ամեայ թագաւորութեան յոբելեանի առիթով։ Ինչպէս լսվում է, արտաքին գործերի մինիստրը ստիպված էր այդ քայլն անել, որովհետեւ պետութիւնները ամենեւին ուշադրութիւն չէին դարձնում թիւրքական կառավարութեան անուղղակի դիմումներին եւ ցանկութիւն չէին ցոյց տալիս որ եւ է բանով մասնակցելու առաջիկայ հանդէսներին»։

—«Vossiche Zeitung» լրագրի Հռոմի թղթակցի ասելով՝ Պապը առաջին անգամ չէ, որ պաշտօնական գանգատներ է հրատարակում բողոքականութեան տարածման դէմ Իտալիայում ընդհանրապէս եւ մասնաւորապէս Հռոմում։ Նա ուղարկել է կարդինալ Վիկտորինին մի նամակ, որի մէջ մատնանիշ է անում այն վտանգը, որ կարող է ծագել բողոքականութեան սանձարձակ պրոպագանդայից։ Կաթոլիկ եկեղեցու գլուխը առանձնապէս դժգոհ է այն փաստից, որ այդ տեսակ պրոպագանդա օրէնքով թոյլ է տրված եւ այդպիսով Պապը դրված է ծանր դրութեան մէջ՝ չունենալով հնարաւորութիւն արգելք դառնալու բողոքականութեան տարածման։ Պապի այս նամակի առիթով «Vossiche Zeitung» նկատում է. «Եթէ դեռ հարկաւոր է ապացուցանել, որ Պապի իշխանութեան սահմանափակումը անհրաժեշտ է մտքի ազատութեան շահերի տեսակէտից, այդ նամակը ամենից լաւ ապացոյցն է։ Հեշտ է երեւակայել, թէ ինչ գործեր կը կատարվէին Իտալիայում, եթէ Պապի ցանկութիւնը իրականանար եւ օրէնքով արգելվէր Իտալիայում մտքի եւ խղճի ազատութիւնը»։

—Դիւանագիտական ընդհարումը Բոլգարիայի եւ Ռումինիայի մէջ, հակառակ գերմանական լրագիրների ակնկալութեան, ըստ երեւոյթին, խաղաղ վերջ կունենայ։ Ռումինական երկրորդ յայտագրին, «Agence Roumaine» լրագրի ասելով, Բոլգարական կառավարութիւնից ստացվեց մի պատասխան, որ գրված է մեղմ եւ խաղաղարար տօնով։ Բոլգարիան իր այդ պատասխանի մէջ յայտնում է, թէ ռումինական հպատակներին Սոֆիայում հալածանքների ենթարկելու գործը արդէն յանձնված է դատարանին։ Բոլգարական արտաքին գործերի մինիստրը մի եւ նոյն ժամանակ յայտնում է, թէ կառավարութիւնը միշտ աշխատել է եւ այժմ եւս կաշխատի լաւ յարաբերութիւններ պահպանել Ռումինիայի հետ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

22 օգոստոսի

ՊՐԷՏՕՐԻԱ։ 500 բօէրներ ազատեցին եւ զէնք մատակարարեցին Եօհաննէսբէրգից ութ ժողն դէպի հարաւ գտնվող Կլիպրիվերի բանտի կալանաւորներին, որոնք բաղկացած են օտարազգիներից եւ տեղացիներից։ Բօդէպօրտի ազգային ազգաբնակութիւնը կալանաւորված է, որովհետեւ կասկածվում է, որ նա մասնակցել է Կրիւգէրսդօրպի եւ Եօհաննէսբուրգի միջեւ գտնվող երկաթուղիական գծի աւերմանը։

ՎԻԵՆՆԱ։ Աստրօ-ունգարական «Մարիա Թերեզիա» նաւից հաղորդում են, որ կայսերական պալատը Պէկինում գրաւված է բոլոր ազգութիւնների զօրքերով, որոնց թւում կայ եւ աւստրօ-ունգարական զօրաբաժնի մի մասը. աւստրօ-ունգարական դրօշակը բարձրացրված է պալատի վրա։ Օգոստոսի 15-ին բոլոր ազգութիւնների զօրաբաժիններն անցան պալատի միջով՝ ցոյց տալու համար, որ պալատը գրաւված է։ Աւստրօ-ունգարական զօրաբաժինը զետեղված է զինուորական նահանգապետ Զժունլիի պալատում. ինքը նահանգապետը, աւստրօ-ունգարան կցորդի պահանջմամբ, բռնված է, որպէս ապստամբներին հովանաւորող եւ յանձնված է Եապօնիային։

ԼՕՆԴՕՆ։ Պաշտօնապէս հաղորդում են, որ ժանտախտը տարածվեց Նաւահանգստում (?), ուր երէկ նրանից մեռաւ մի տղայ։ Լուրերին նայելով, Գլասգօյում այսօր երեք նոր կասկածելի դէպքեր կային։ Պաշտօնական բիւլլէտէնում ասված է, որ ժանտախտով հիւանդները 12 են, իսկ բժշկական հսկողութեան տակ գտնվում են 85 մարդ։

ԼՕՆԴՕՆ։ «Ռէյտէրի գործակալութիւնը» լսել է, որ Պեկինի անգլիական դեսպանի հետ յարաբերութիւններ սկսելու համար արած ջանքերի ժամանակ՝ մեծ դժուարութիւններ ծագեցին, եւ այդ պատճառով հաւանական լինի, որ բրիտանական կառավարութիւնը որ եւ է վերջնական որոշումի գայ իր ընթացքի վերաբերմամբ Չինաստանում, մինչեւ որ Մակդոնալդ հնարաւորութիւն չունենայ մանրամասն զեկուցում ներկայացնելու գործերի դրութեան մասին։

ԼՕՆԴՕՆ։ Բօկշիլ, Միացեալ-Նահանգների յատուկ կօմիսարը Չինաստանում, մի թղթակցի հետ խօսակցելու ժամանակ պնդում էր, թէ մեծ նշանակութիւն ունի պետութիւնների հաւասարաչափութիւնը, որովհետեւ նա է միակ պաշտպանողական միջոցը։ Եթէ, ասում էր նա, Չինաստանին աջողվի խախտել պետութիւնների հաւասարաչափութիւնը եւ տարաձայնութիւններ սերմանել կամ գոնէ թուլացնել նրանց փոխադարձ համաձայնութիւնը, այն ժամանակ բոլոր օտարազգիներին այլ եւս ուրիշ բան չէ մնում, եթէ ոչ տեղաւորել իրանց իրերը եւ անհետանալ։ Ներկայումս աւելի լաւ կը լինի օգուտ քաղել դրութիւնից եւ մի անգամ ընդմիշտ կարգադրել օտարազգիներին վերաբերեալ հարցը Չինաստանում. եթէ գործն այժմ չը կարգադրվի, չինացիները կը խրախուսվեն շարունակելու իրանց քաղաքականութիւնը եւ պետութիւնները ստիպված կը լինեն ամեն անգամ յաղթել նոյնանման դժուարութիւնների»։ Բօկշիլ կարծում է, որ պետութիւնների մեծամասնութիւնը աւելի մեծ նշանակութիւն է տալիս օտարազգիների դրութեան վերջնականապէս կանոնաւորելու եւ նրանց ազատութիւն տալու հարցին, քան երկիրներ ձեռք բերելուն։ Բօկշիլ այն կարծիքի է, որ նորերս տեղի ունեցած անկարգութիւնները կազմում են չինական կառավարութեան ծրագրի մի մասը, որ նպատակ ունէր արտաքսել բոլոր օտարազգիներին, ինչպէս եւ երեւում է կառավարական օրգանում տպված հրամաններից։ Վերջին անցքերը այժմեան ճգնաժամի միայն առանձին երեւոյթներն էին եւ գլխաւոր աշխատանքը դեռ պէտք է կատարվի։ Բօկշիլ տեղեկութիւններ չէր ստանում դիպլոմատիական եւ զինուորական յատկութիւն ունեցող անցքերի մասին Պէկինում. նրան եւ ուրիշ պաշտօնական անձանց Չինաստանում չաջողվեց պատասխան ստանալ այն հեռագիրների, որոնք ուղարկված էին Պէկին պետութիւնների ներկայացուցիչներին։ Կարծում են, որ Զիֆուի եւ Շանղհայի միջեւ չինացիները աղաւաղում են այդ հեռագիրները։ Ինչպէս ասում են, առեւտրական ճգնաժամը չինական շրջաններում պէտք է որ մեծ ազդեցութիւն գործէ գործերի դրութեան վրա. առձեռն փողի համար ամսական վերցնում են 6%. չինացի վաճառականները աշխատում են համոզել չինական պաշտօնեաներին՝ վերջ դնել դէպի օտարազգիներն ուղղված թշնամական շարժման։ Լիխունգչանգ մնում է Շանղհայում։

ԼՕՆԴՕՆ։ Լրագիրներում հրատարակված է հետեւեալ հեռագիրը Շանղհայից, օգոստոսի 18-ից. «Գերմանական դեսպանութիւնը, լուրերին նայելով, բնակութիւն հաստատեց այստեղ, բայց հաւանական է, միմիայն ժամանակաւորապէս, մինչեւ որ կը գայ Վալդերզէէ։

ՇԱՆԳՀԱՅ։ Ակնյայտնի է, որ կայսերական պալատի Պէկին վերադառնալն անհրաժեշտ է վերջնական բանակցութիւնների հնարաւորութեան համար, բայց անպայման ճիշդ է, որ այդ բանակցութիւնները ինտրիգների պատճառով կը ձգձգվեն։ Չինաստանում քաղաքակրթութեան իրաւունքներից հրաժարվելուն հաւասարազօր կը լինէր, մի բան, որ ակնյայտնի խոստովանում են իրանք չինացիները եւ մինչեւ անգամ չինացի պաշտօնեաները, եթէ յետադիմական շարժման առաջնորդները չենթարկվեն ամենածանր պատժի. վերանորոգութիւնները եւ ռէֆորմները կատարելապէս անհնարին կը դառնան այն ժամանակ Չինաստանում.—«Բատավիա» նաւը, հիւպատոսական մարմնի ցանկութեամբ, Շանղհայից ուղեւորվում է Վուղուն, որպէս զի ափ իջեցնէ այնտեղ գերմանական զօրքերը՝ անգլիացիներին եւ ֆրանսիացիներին օգնելու համար կարգը վերականգնելու գործում։

ԼՕՆԴՕՆ։ Անհնարին է, որ պետութիւնները որոշ միջոցներ ձեռք առնեն ապագայ գործողութիւնների վերաբերմամբ Չինաստանում, մինչեւ Պեկինից, դեսպաններից չը ստացվեն մանրամասն զեկուցումներ գործերի դրութեան մասին։ Տեղեկութիւնների բացակայութիւնը Պեկինից եւ դեսպանների հետ յարաբերութիւններ կապելու անհնարաւորութիւնը անհանգստութիւն են պատճառում, որովհետեւ պատճառներն անյայտ են։ Կարծում են, որ չինացիները կրկին կարել են հեռագրական հաղորդակցութիւնը։ Դրութիւնն աւելի եւս ծանրանում է այն պատճառով, որ յայտնի չէ փախած չինական իշխանութիւնների ընթացքը։

ՊԵԿԻՆ։ Անգլիական զօրաբաժինը, բաղկացած ուլանների երեք էսկադրոններից, երկու թնդանօթից եւ 300 հետեւակներից, օգոստոսի 7-ին հետախուզութիւն կատարեց կայսերական որսորդական պարկի մէջ, եւ հանդիպեց թշնամուն պարկի սահմաններում։ Թշնամու ոյժերը բաղկացած էին չինական զօրքերից եւ «Մեծ բռունցքից». նրանք զինաւորված էին հրացաններով, տէգերով եւ սրերով։ Թընդանօթաձիգ զօրքը հարկադրեց թշնամուն յետ քաշվել։ Հինգ գիւղեր այրված են։ Թշնամու կորուստները—30 սպանվածներ. անգլիացիների կողմից վիրաւորված է միայն մէկը։ Թշնամու զօրքը բաղկացած է 1000 մարդուց։

ՐԱՄԲՈՒԼԻԷ։ Իշխան Ուրուսօվ, յանձնելով հանրապետութեան նախագահին ս. Անդրէյ Նախակոչի շքանշանը Թագաւոր Կայսրի ինքնագիր նամակի հետ միասին, արտասանեց հետեւեալ ճառը. «Թագաւոր Կայսրը կը կամենար, որ այս գործողութեան մէջ դուք տեսնէիք այն բարձր յարգանքի ապացոյցը, որ Նորին Մեծութիւնը տածում է դէպի ձեր անձը, նոյնպէս եւ Նրա անփոփոխ զգացմունքների հաւատիքը դէպի բարեկամ եւ դաշնակից մեծ ազգը։ Այս յանձնարարութիւնը ամենարարեբաղդն է այն բոլոր անցքերի մէջ, որոնք տեղի են ունեցել ինձ յանձնած խնդրի իրագործման ժամանակ, մի խնդիր, որի նպատակն էր սրտակից եւ այնպէս աջողակ դասաւորված յարաբերութիւններ պահպանել Ֆրանսիայի եւ Ռուսաստանի մէջ»։ Նախագահ Լուբէ պատասխանեց. «Նորին Մեծութիւնը նորից կամեցաւ ապացուցանել իր զգացմունքների անփոփոխութիւնը դէպի բարեկամ եւ դաշնակից ազգը։ Այդ գործողութեան մէջ մենք տեսնում ենք ապացոյց Նրա ցանկութեան աւելի եւս սերտ կապ հաստատելու երկու կառավարութեան եւ երկու ազգի մէջ։ Խնդրում եմ ձեզ հաղորդել Նորին Մեծութեան իմ երախտագիտութեան արտայայտութիւնը եւ հաւատացնել Նորին Մեծութեանը, թէ ֆրանսիական կառավարութիւնը իւրաքանչիւր օր ջանք է գործ դնում պահպանելու այն կապը, որ այնքան օգտաւէտ է երկու ազգի համար եւս»։ Երեկոյեան Լուբէյի մօտ ճաշկերոյթ կար, որին ներկայ էին Վիտէ եւ Կարցօվ. դրանից յետոյ տեղի ունեցաւ ջահագնացք. փողոցները հրավառված էին եւ զարդարված ռուսական եւ ֆրանսիական դրօշակներով. լսվում էին աղաղակներ ի պատիւ Ռուսաստանի։

ՊԵԿԻՆ։ Իշխան Ցին փորձում է բանակցութիւններ սկսել դաշնակիցների հետ։

ՊԵԿԻՆ։ Բօբերտ Գարտ նորից ստանձնեց մաքսատների վարչութիւնը եւ նորից բացեց կայսերական պօստը։

ՊԵԿԻՆ։ Ցզունգլիեամէնի երեք անդամներ փորձեցին, Գարտի միջոցով, բանակցութիւններ սկսել դաշնակիցների հետ՝ կայսերական պալատի կործանման առաջն առնելու համար։ Պալատը գրաւված է ռուսաց զօրքերով, որպէս զի ոչ ոք չը կարողանայ կործանել նրան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ Լենեւիչ զեկուցանում է օգոստոսի 9-ից, թէ լրտեսներից տեղեկութիւն ստանալով, որ կայսերական հարաւային պարտէզում կան բռունցքամարտներ եւ չինական զօրքեր, օգոստոսի 8-ին հետախուզութիւն կատարեց այնտեղ՝ ռուսներից, եապօնացիներից, անգլիացիներից եւ ամերիկացիներից բաղկացած զօրախմբով, անցաւ ամբողջ պարտէզը, որ 18 վերստ երկարութիւն ունի, բայց ոչ ոքի չը գտաւ։ Լուրերին նայելով՝ բռունցքամարտներն եւ զօրքերը փախել են։ Զօրաբաժինը գիշերեց պարտէզում։ Հետեւեալ օրը կօզակները հետախուզութիւններ կատարեցին հարաւ-արեւմտեան ուղղութեամբ, բայց ոչինչ չը գտան։ Երկաթուղին Պեկինի մօտ բոլորովին աւերված է. նրա ամբողջ շարժական մասը այրված է. չը կայ ոչ մի շոգեկառք. մնացել են միայն ռէլսերը։ Մաղզեանու կայարանի չինութիւնը գրաւված է մեր զօրքերով։ Ճանապարհի վերանորոգման աշխատանքները կսկսվեն երկու կողմից։ Պէյխօ գետը ծանծաղանում է ու գժուարացնում նաւերի երթեւեկութիւնը։ Տեանձին-Պեկինի երկաթուղին վերանորոգված է մինչեւ Եանձուն, որտեղ ձեռնամուխ են եղել կամրջի շինութեանը։ Այդտեղից ճանապարհը մինչեւ Լօժու սաստիկ վնասված է. շատ կամուրջներ քանդված են։ Պեկինից մինչեւ Եանձուն հարկաւոր կը լինի 100 վերստ տարածութեամբ նոր գիծ շինել։ Կարծվում է, որ նիւթեղէնը կը պակասի, որի մի մասը պատուիրված է Շանղհայում։ Միջոցներ են ձեռք առնված յափշտակված իրեղէնները գտնելու համար. պարգեւներ են խոստացված այն բնակիչներին, որոնք կը բերեն տարված նիւթեղէնը։

ԲԵԼՕՎԵԺ։ Ծխական եկեղեցում տեղի ունեցած պատարագից յետոյ, որին ներկայ էին Նոցա Կայսերական Մեծութիւնները եւ Մեծ Իշխանները, օրհնվեց, Նոցա Մեծութիւնների ներկայութեամբ, կանանց ժողովրդական ուսումնարանի նոր շէնութիւնը։

ՊԵԿԻՆ։ Հաղորդակցութիւնը Տեանձինի եւ Տակուի մէջ Պէյխօ գետի միջոցով կարված է՝ եապօնական մի փոքրիկ շոգենաւի կործանման պատճառով։ Երկաթուղու գիծը մինչեւ Եանձուն վերանորոգված է եւ իւրաքանչիւր օր չորս գնացքներ են շրջում Եանձունի, Տօնկուի եւ Տեանձինի միջեւ։

ՄԱՍԵՐՈՒ։ Լէգի-Բրանդ գրաւված է Ֆուրիէի, Գրօբբելարի, Լէյմերի, Մասսերրօկի զօրաբաժիններով եւ Տերօնի 200 հետախոյզներով։ Բերդապահ զօրքը այրեց ռազմամթերքը, որ նա չընկնի բօէրների ձեռքը, երբ նրանք գրաւեն քաղաքը։ Բերդապահների դրութիւնը կրիտիքական է։ Գենտեր չտապում է օգնութեան հասնել։

ՏԵԱՆՁԻՆ։ Լուրերին նայելով՝ ամերիկական դեսպանը պահանջում է, որ Լի-Խունգ Զանգին թոյլ տրվի գնալ Պեկին խորհրդակցելու համար։ Այստեղ ստացվում է հիմա առատ պաշարեղէն եւ շտապով ուղարկվում է Պեկին։

ՊԱՐԻԶ։ Ռուսաց Կայսրի ինքնագիր նամակի մէջ, որի հետ միասին նախագահ Լուբէին յանձնված է ս. Անդրէյ Նախակոչի շքանշանը, ասված է հետեւեալը. «Ինձ առանձնապէս հաճելի է ցոյց տալ ձեզ իմ յարգանքի այս հաւատիքը այնպիսի ժամանակ, երբ այնքան աջողութեամբ Ֆրանսիայի եւ Ռուսաստանի մէջ կայացած լիակատար համաձայնութիւնը կարող է հիմա աւելի, քան երբ եւ իցէ, ցոյց տալ իր բարերար ազդեցութիւնը ոչ միայն նրանց սեփական շահերի վրա, այլ նաեւ ի նպաստ ընդհանուր խաղաղութեան պահպանման, որը հաւասարաչափ մօտ է Մեր սրտին»։ Նամակում յայտնված է Կայսրի եւ Կայսրուհու ցաւը, որ ներկայումս անհնար է այցելել ցուցահանդէսը, բայց—չարունակում է նամակը—սովորած լինելով հեռուից, ինչպէս եւ մօտիկից, մասնակից լինել այն ամենին, ինչ որ վերաբերում է Ֆրանսիային, Մենք ողջունում ենք գոհութեամբ սրտի այն բոլորը, ինչ որ նպաստում է նրա փառքին եւ բարօրութեանը։

ՖՐԱՆԿՖՈՒՐՏ ՄԱՑՆԻ ՎՐԱՑ։ «Frankfurter Zeitung» հաղորդում է հետեւեալ հեռագիրը

Նիւ-Իորկից. «Սուն յայտնում է, թէ Ամերիկան չընդունեց ռուսաց առաջարկութիւնը։ Նա աշխատում է հաւասարապէս ազդել բոլոր պետութիւնների վրա այն նպատակով, որ դաշնակից զօրքերը մնան Պեկինում, բայց եթէ պետութիւններից որ եւ է մէկը հեռացնէ իր զօրքերը, Ամերիկան կը հետեւի նրան։ Եապոնիան միատեսակ հայեցակէտ ունի իրերի դրութեան վերաբերմամբ Ամերիկայի հետ։ «New-York-Herald»-ի տեղեկութիւններով՝ Լի-Խունգ-Զանգ տեղեկութիւն ստացաւ, թէ չինացիները մեծ կորուստներ պատճառեցին դաշնակից զօրքերին Կանչժունի մօտ։

23 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ֆինանսների մինիստրութեան կողմից յայտարարվում է. «Վերջին ժամանակ տարածված լուրերը միջին-ասիական բաժակը ակցիզի ենթարկելու վերաբերմամբ բոլորովին անհիմն են»։

ԳԼԱՍԳՈ։ Այժմ հիւանդանոցում գտնվում են ժանտախտից բռնված 13 հիւանդներ, իսկ բժիշկների հսկողութեան տակ գտնվում են 1 3 հիւանդներ, որոնց վրա ժանտախտի կասկածելի նշաններ կան։ Երէկ հիւանդների թիւը 12-էր, իսկ կասկածելիներինը—89։

ԲԵՐԼԻՆ։ Գերմանական զօրքերի զօրախաղերին ներկայ լինելու համար Բերլին կը գան ֆրանսիական ներկայացուցիչներ—մի գեներալ, մի գնդապետ եւ մի մայոր։

ՀԱԳԱ։ Ստացված են խաղաղութեան կոնֆերենցիայի ժամանակ ստորագրված դաշնագրերի եւ դէկլարացիաների հաստատութիւնները։ Ներկայացնելով այդ հաստատված դաշնագրերը՝ արտաքին գործերի մինիստրը յայտնեց, թէ այս ձեւականութիւնը լրացնում է կոնֆերենցիայի աշխատանքները։ Մինիստրը յոյս ունի, որ կոնֆերենցիայի ստեղծած գործը հաստատուն եւ բարերար կը լինի մարդկութեան համար։ Մինիստրը առաջարկեց յայտնել այդ ցանկութիւնը Մեծահոգի Կայսրին, որի ձեռներէցութեամբ կայացաւ կոնֆերենցիան։ Որոշված է համապատասխան հեռագիր ուղարկել ռուսաց Կայսրին։

ԲԱՏ-ՖՕՆԴԷՆ։ Օգոստոսի 20-ին Բուլլէր յարձակում գործեց այն բարձրութիւնների վրա, որոնք տիրում են Լէյդենբուրգին։ Թշնամին ամբողջ օրը պաշտպանում էր անցքը։ Երբ անգլիական հեծելազօրքը մօտեցաւ, թշնամին կրակ բացեց երեք մեծ եւ մի արագաձիգ թնդանօթներից։ Մինչեւ մութն ընկնելը՝ ամբողջ օրվայ ընթացքում, բօէրների թնդանօթները կրակ էին թափում, բայց որովհետեւ անգլիացիները գտնվում էին գոգաւոր տարածութեան մէջ, ուստի եւ չափազանց քիչ կորուստներ ունեցան։

ԼՕՆԴՕՆ։ Բօբերտս հեռագրում է Բէլֆասթից, օգոստոսի 21-ից. «Դէպի Պետերբուրգ գնացող երկաթուղային գծի վրա բօէրները կործանեցին մի գնացք, որի մէջ գտնվում էին զինուորներ։

ՊԱՐԻԶ։ «Journal des Debats» ուրախութիւն է յայտնում Լուբէին Անդրէյ Նախակոչի չքանչանը չնորհելու առիթով՝ որ յանձնվեց նրան Թագաւոր Կայսրի ինքնագիր նամակի հետ միասին, «որովհետեւ—ասում է լրագիրը—այնքան յամառ ջանքեր գործ դրվեցին հաժոզելու համար, թէ ֆրանս-ռուսական համաձայնութիւնը խախտված է, որ ամեն մարդ պիտի առանձին բաւականութիւն զգայ՝ հաւատիանալով այդ պնդումների անճշդութեանը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Նայելով Զաֆֆիի աղճատված հեռագրին, որ հրատարակել է զինուորական մինիստրութիւնը, պատերազմական գործողութիւնները իսկապէս դադարած են։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մկանաւոր. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանցի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ի. Ֆ. Պրօսաեվիչ—12—1 ժ. ականջի, քթի, կոկորդի եւ կրծքի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. Պրօսաեվիչ—6—7 ժ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ս. Աւվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Ցանկանում են

ընդունել փոքրահասակ աշակերտներ ռուս ընտանիքում։ Տեղեկանալ պայմանների մասին գիմնազիայի ուսուցիչ Պլամենեվսկու մօտ։ Военная, 3, противъ разгонной почты.

(ե. հ. չ.) 1—3

Ատամների եւ բերանի խոռոչի հիւանդութիւնների

ԲԺ. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԿԱՃԿԱՃԵԱՆ

ընդունում է հիւանդներ օգոստոսի 17-ից Երեւանեան հրապարակ, լուսանկար Роиновъ-ի տակը։ 3—25

ԴՊՐՈՑ

տիկ. Կատ. Լիսիցեանցի

երկու սեռի մանուկներ հասար. միատեղ պարապմունք իր հարազատ երեխաների հետ։ Ընդունելութիւնը՝ սահմանափակված։ Սեպտեմբերից բացվում է նաեւ պանսիօն։ Դիմել—օգոստոսի 26-ից—Բեհբութեան փողոց (Նախկին Սադովայա), սեփ. տ. № 29)։ (ե.) 17—25

ԳԻՒՂԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՈՒՍՈՒՑԻՉ

Նախապատութիւն կը տրվի Ներսիսեան շրջանաւարտներին. ժամրամասն պայմանների համար դիմել Сочи [Черн. грб.], Лаз. Айвазяну. 2—4

Մի պատուաւոր հայ ընտանիք հասոյթաւորներ (нахлѣбники) է ընդունում։ Հարցնել Ալէքսանդր Շաղինեանի խանութում, քաղաքային վարչութեան չինութեան մէջ։ (ե.) 4—5

Ուսումնարան եւ Պանսիօն

ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

(Սօլոլակ, Բէբութովսկայա փողոց (Նախկին Սադովայա) № 46)։

Աշակերտների ընդունելութիւնը սկսվում է օգոստոսի 28-ից։ Ուսումը—սեպտեմբերի 1-ից։ Ուսումնարանում կայ առանձին բաժանմունք փոքրահասակ երեխաների համար (ե. հ.) 2—5

Ֆինանսների մինիստրի թոյլտուութեամբ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշվապահներ։ Աւարտողներն ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշվապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական ոնտեսագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ արագագրութիւն (ուղղումն ձեռագրի)։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղբ. Ծովիանեան եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) եւ ժամրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (ե. չ.) 17—25

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են հետեւեալ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ՝

Աղայեան՝ Ուսումն մայրենի լեզուի, ա. տարի. 25 կ.
» Ուսումն մայրենի լեզուի, բ. տարի. 40 կ.
» Ուսումն մայրենի լեզուի, գ. տարի. 55 կ.
Աղանեանց՝ Կարգ Աստուածապաշտութեան Հայաստանեայց ա. եկեղեցւոյ, 50 կ.
» Աղօթատետր ուսումնարանների համար, գ. տպագրութիւն. 10 կ.
» Կրօնի դասագիրք, բ. տարի. 15 կ.
Գէորգ-Բէգեանց՝ Ժողովածու թուաբ, խնդիրների. ամբողջ թուեր. 40 կ.
» Ժողովածու թուաբանական խնդիրների. կոտորակներ. 50 կ.
Երզնկեանց Եզ. ա. քահ.՝ Դասագիրք կրօնի, ա. գրքոյկ, գ. տպ. 20 կ.
« » Դասագիրք կրօնի, բ. գրքոյկ, 30 կ.
Երզնկեանց՝ Գր. քահ.՝ Թուաբանական խնդիրներ եւ օրինակներ, գ. տարի. 35 կ.
Կոստանեանց՝ Նախաշաւիղ 20 կոպ.
» Ծաղկաքաղ, ա. շրջան. 25 կոպ.
» Ծաղկաքաղ, բ. շրջան. 35 կոպ.
» Ծաղկաքաղ, գ. շրջան. 40 կոպ.
» Հիւսուածք հայոց հին պատմագիրների խօսքերից, աշխարհ., ա. ժ. 75 կ.
Ղուկասեանց՝ Ընդհանուր պատմութիւն հին դարու. 80 կ.
» Քերականութիւն գրաբար լեզուի հայոց, 50 կ.
Մալխասեանց՝ Գրաբարի հոլովումն, խոնարհումն եւ նախադրութիւնք. 25 կ.
» Գրաբարի համաձայնութիւնը. 50 կ.
Մանդինեանց՝ Ընտանեկան աշխարհ. 25 կ.
» Դիւցազնական աշխարհ. 25 կ.
» Հենչէլի՝ բացատրութիւն ուսուցիչների համար. 30 կ.
Նազարեանց՝ Հայոց լեզուի ուսուցիչ, գ. տարի. 40 կ.
» Հայոց լեզուի ուսուցիչ, դ. տարի. 60 կ.
» Ընտիր հատուածներ, ա. մասն.—արձակ, դ. տպագր. 1 բուբլի.
Պալասանեանց՝ Հայոց պատմութիւն, սկզբից մինչեւ մեր օրերը. 1 ր. 50 կ.
Սահակեանց՝ Դասագիրք կրօնի, հին ուխտ, հատ. ա. (ուսուցչաց համար). 1 ր. 75 կ.
» Դասագիրք կրօնի, նոր-ուխտ, հատ. բ. (ուսուցչաց համար) 2 ր. 5 կ.
» Մի քանի խօսք հայ կրօնուսոյցներին (ուսուցչաց համար), 10 կ.
» Ուսումն քրիստոնէական կրօնի, հատ. դ. 1 ր. 50 կ.
» Ուսուցումն քրիստոնէական կրօնի. հատ, ե, 50 կ.
» Տասն պատուիրան. 50 կ.
» Դասագիրք կրօնի, ա. տարի (աշակերտաց համար) 20 կ.
» Դասագիրք կրօնի, բ. տարի (աշակերտաց համար) 20 կ.
» Դասագիրք կրօնի, գ. տարի (աշակերտաց համար) 30 կ.
» Սրբազան պատմութիւն հին-ուխտ, դ. տարի. 45 կ.
» Սրբազան պատմութիւն նոր-ուխտ, ե. տարի 40 կ.
» Սրբազան պատմութիւն, Գործք առաքելոց, 40 կ.
Սիմէօնեանց՝ Սրբազան պատմութիւն Հին-կտակարանի. 50 կ.
Վարձելեան՝ Դասագիրք թուաբանութեան. 70 կ.
Տէր-Գաբրիէլեան՝ Քրիստոնէական վարդապետութիւն. 25 կ.
Տէր-Ղեւոնդեան՝ Մայրենի լեզու, ա. տարի 35 կ.
» Մայրենի լեզու, բ. տարի. 40 կ.
» Մայրենի լեզու գ. տարի. 50 կ.
» Մայրենի լեզու 4 տարի. 65 կ.
» Քերականութիւն մայրենի լեզուի, աշխարհաբար. 50 կ.
» Հայորդի՝ Սրբազան պատմութիւն Հին-կտակ. 50 կ.
» Սրբազան պատմութիւն Նոր-կտակ. 50 կ.
Տէր-Միքելեան՝ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ քրիստոնէականը. 2 ր.
Տէր-Սարգսեանց՝ Հայկական գեղագրութեան օրինակներ, դ. տպ. 30 կ.
» Վայելչագրութեան դասաւանդման եղանակը. 20 կ.
Տէր-Ստեփանեան՝ Սկզբունք քրիստոնէական հաւատոյ. 60 կ.
Օրբելի՝ Դասատետր եկեղեցական պատմութեան (համառօտ) 1 ր.
Բահաթրեան՝ Առաջին ընթերցարան 40 կ.
Բէգ-Նազարեան՝ Համառօտ քրիստոնէական վարդապետութիւն. 60 կ.

Вересовъ, Рисованіе по сѣткѣ. 20 коп.

Դիմել՝ Въ Тифлисъ, Цѣнтральную Книжную Торговлю. (հ.) 1—2

Սովորեցնում եւ պատրաստում եմ երկու սեռի անձանց, չորս ամսվայ ընթացքում, լիակատար երաշխաւորութեամբ և, կարեւոր դէպքերում, պարապմունքներ գտնելու համար յանձնարարութիւններ տալով

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ.

Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով։ Առեւտրական թուաբանութիւն։ Գեղագրութիւն. ուսումնասիրութիւն զանազան տեսակ շրիֆտների եւ ուղղումն ամենավատ ձեռքերի։

Կարելի է տեսնել առաւօտեան 9—10 ժ. եւ երեկոյեան 4—7։ Պարապմունքները սեպտեմբերի 20-ից։

Հասցէ. Սօլոլակ, Գանօվսկայա փողոց, տուն Թամամշեանի, № 26, բնակարան 9.

Սերգէյ Վօս. Աբրահամեանցին։ (ե. հ. չ.) 1—10

ԴՊՐՈՑ

ԵՒ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

Ե. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

(ԾՆՆԴ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ)

Ընդունվում են տղայք եւ օրիորդներ եւ պատրաստվում գիմնազիօն, ռէալական, վաճառականական եւ այլ միջնակարգ դպրոցներ մտնելու համար։ Ընդունելութիւնը օգոստոսի 22-ից, ուսումը սեպտեմբերի 1-ից։

Մանկական պարտիզում ընդունվում են 4 տարեկանից։

Садовая [Бебутовская], домъ Шадинова, № 38. 2—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 30 օգոստոսի (12 սեպտեմբերի) ԺՕՐԺԻ շոգենաւը, նաւապետ ԼԱՆԵՐ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին աչից լեռոյ։

Կարանտինի պատճառով ընկերութիւնը չէ կարող երաշխաւորել շոգենաւերի կանոնաւոր ուղեգնացութեան համար Բաթումից։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրաֆեանցներին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍԻԲՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (ե. հ. չ.) 3—20

Дозволено цензурою, Тифлисъ, 23 Августа 1900 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27.